«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.9-րդ գլխով.

« **ԳԼՈՒԽ 31.9**

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 222.28. Հանրային ծառայություն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերով գործերի քննության ժամկետը և դատարանի կազմը

1. Վարչական դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է հանրային ծառայության իրականացման ընթացքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև հանրային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը:
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վեճերը վարչական դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:
3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված վեճերը վարչական դատարանը քննում և լուծում է միանձնյա:

Հոդված 222.29. Հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու և հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետները

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:
2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին, որը կատարման ենթակա է պատասխանողի կողմից որոշումն

ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

3. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից մեկ ամիս հետո:
2. Սույն օրենքի պահանջները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների նկատմամբ: